

## Ա Ր Ա Ր Ա Տ



Արարատ գաւառի՝ այս խորհրդարան երկրին մէջ է, ուր ամենահին աւանդու-  
թիւնները կը դնեն հայեւկապատկերը մեր  
ծագման, որ շուրջ քսան և հինգ դարերէ  
ի վեր Հայերը հաստատած են իրենց քնա-  
կաւայրը: Այդ մեծիդ զանգուածին՝ խո-  
ւրդ լեռներու քառսիս մէջն է որ՝ այս  
ժողովուրդը փարած է հողին, և եղած է  
ազգ մը. բայց այդ երկրորդ, արդէն իսկ  
սրբազան, նշանաւոր էր հին ժամանակ-  
ներու բնակիչներուն պատճառաւ, որով-  
հետեւ՝ իրենց բարեպաշտութեան մէջ՝ հոն  
է որ դրած էին մարդկային վերածնու-  
թեան տեսլարանը, սկսեալ ջրհեղեղներու  
էն ահաւորէն որոնց տարտամ յիշատակը  
փոխանցուած ըլլայ երբեք մարդոց մտքին  
մէջ՝ սերունդէ սերունդ:

Հինքու երևակայութեան մէջ՝ Արա-  
րատն համարուեցաւ իբր հրաշալիք մը,  
իբր գերբնական զօրութեան մը գործ, և  
վիթխարի զանգուածը սրբազան եղաւ,  
բնակուած «վիշապազունք» ոգիներէ՝ իր  
ձիւնալիք զագաթին մոռցուած դարերու  
տարտամ յիշատակները, աւանդութեամբ  
գեղեցկացած եղելովքիւնները կը միացը-  
նեն և Արարատը՝ աստուածային ձեռնե-  
րէ կերտուած՝ դրուեցաւ իբր հակադրու-  
թիւն այն աշտարակին հետ զոր մահա-  
ցունները անկարող եղած էին բարձրացնել  
մինչև երկինք: Այս պատճառաւ հրարու-  
թի վեհութիւնէն՝ մեծութեան և զօրութեան  
այնպիսի տպաւորութիւն մը, այնպիսի  
վսեմ բանաստեղծութիւն մը կը ցոլանայ,  
որ պարզ հոգիները ամէն ժամանակ զմայ-  
լեցան և սքանչացան բնութեան այս հրա-  
շակերտին առջև, երբ՝ գիշերուան մթու-  
թեան մէջ՝ հսկային զագաթը իր բոլոր  
լուսափողփող փառքին մէջ կ'երևի: Այդ  
վայրկեանին՝ Արարատը՝ երկնային զօ-  
րութեան պատգամաւորը՝ կ'աւետէ մար-  
դոց թէ Ձրադաշտ աստուածը կը պատ-  
րաստուի հին աշխարհին վրայ իր ոսկե-

ղէն գունտը ծագեցնելու: Մասիսը առա-  
ջակողմեան Ասիոյ հրաշալի լեռն է՝ որ  
կը տիրապետէ, կ'ընկնէ զինք շրջապա-  
տող ամէն ինչ, և կը թուի թէ դարբնուած  
ըլլայ Հեփեստոսէն՝ որպէս զի գինքը դի-  
տողին հոգեւոյն մէջ խռովութիւն ձգէ:

Այն պահուն երբ՝ դէպի արևելք՝ եր-  
կինքը կ'այլի՝ արշալոյսը կարապետող  
կրակներէ, այն ատեն երբ բոլոր Հայաս-  
տան դեռ կը ննջէ՝ խառարին մէջ խորա-  
սուզուած, արիւնի կաթիլ մը կը տեսնուի  
ամպին մէջ, փայլուն ինչպէս դարբինին  
սալին վրայի պողպատը: Կամաց կամաց  
այդ բիծը կը տարածուի, կ'երկնայ և  
կ'առնէ հսկայ նետի մը սայրասուր երկա-  
թին ձևը, որուն ծայրը երկնքին կը սպառ-  
նայ: Մեծ Արարատին ձիւնեղէն զագաթն  
է այն զոր կը ծերաներփեն արեգակին  
ատանին նշոյշները, երբ նոյն ինքն աստ-  
ղը՝ մահկանացուներուն համար դեռ ծած-  
կուած՝ կ'աւետէ իր զալուստը այն շոգե-  
րով որ կը տարածէ ամպին մէջ, սև լեռ-  
ներէն անդին: Վիթխարին զագաթը  
միայն լուսաւորուած է արշալոյսի կրակ-  
ներէն. թուի թէ կը հալի և կը սկսի  
դանդաղորէն հոսիլ վար, մինչ փերսի  
կառքը հորիզոնին վրայ կը բարձրանայ:

Հսկային ձախակողմը՝ կը բարձրանայ  
ուրիշ ծայր մը, աւելի ցած՝ նոյնպէս սուր,  
ան ալ արևմտ. փոքրիկ Արարատն է  
որուն կը դպչին օրուան առաջին աղօտ  
լոյսերը. և այն տեսիլը, ժամանակներու  
այդ վերլիշումը, երբ երկու բաժանները  
բոց և լավա կը ժայթքէին, քանի մը  
վայրկեանին մէջ կ'անհրաժեշտանայ: Այն  
ատեն՝ դէպի արևմուտք՝ կը տանուի իս-  
կոյն ուրիշ մարած հրաբուխ մը զագա-  
թը, երկու Արարատներու եղբայրը՝ Ա-  
լակէօզը (Արագած), որուն յաւերժական  
ձիւնները, այս ժամուս արդէն կապոյտ եր-  
կնքին մէջ վարդագոյն կ'երևան, Արև-  
մտեան Հայաստանի լեռներու մութ քառ-  
սին վրայ կը զանազանուին, կամաց կա-  
մաց հարիւրաւոր զագաթներ մթութենէն  
կ'ելլեն, անոնք բոլոր հովիտներուն մէջ  
կ'աւետեն օրուան զալուստը, մինչդեռ հո-

վանին և առաւօտեան շամանդաղը կ'ընդ-  
գրըկեն դեռ Արաքսի բոլոր գաշտագետի-  
նը, Երեւանը՝ Երուսաղէմ թագաւորէն հիմ-  
նուած հին քաղաքը, Էջմիածինը՝ Հայոց  
սուրբ քաղաքը: Հեռուէն կը լսուին աս-  
տուածային պաշտամունքի հրաւիրող գան-  
գակներու զօղանջը, գիւղերէն դուրս ել-  
լող հօտերուն մայիւնը, հովիւներու եր-  
գերը, շուններու հաջիւնը, Հայաստանն է  
որ կը զարթնու՜ դառնալու համար իր  
արգասաբեր դաշտերուն ամենօրեայ գոր-  
ծին:

Քայց ահա արեւը՝ որ կը ժպտի իր  
զուարթ դէմքով արշալոյսէն առաջ ելլող  
աշխատաւորներուն, մշուշին քողերը կը  
վանէ, գիւղերու վրայ սաւառնող թեթև  
ծուխերը կը կապուտացնէ և կը տարածէ  
շերտաւորներ իր գոլորշիները կապուտա-  
զգեստ կամ կարմրագգեստ կիւներ, սափոր  
մը դրած իրենց գլխուն կամ ուսին վրայ,  
շաղկիւրատելով կ'ելլեն իրենց դեղնորակ  
հողէ տուններէն, մինչ մարդիկ՝ ոչխարա-  
մորթէ ծանր խոյր մը դրած՝ ըստ թա-  
թարներու սովորութեան, կ'երթան և կու-  
գան, իրենց ձիերն գուռ կը տանին, եզ-  
ներն հերկելու կ'առաջնորդեն: Անոնք  
կ'երգեն, բնութեան զարթնումին հանդէպ  
անհոգ, սիրային երգեր կ'երգեն և կամ  
աշուղներէ պահուած հին առասպելներ, և  
նոյն իսկ նայուածք մը չեն նետեր այն  
հսկային որ վեհօրէն կը կանգնի դաշտա-  
գետինէն անդին, հիացման առարկայ ճա-  
նապարհորդին, բայց գեղջուկը որ միշտ  
տեսած է իր ծննդեան օրէն ի վեր, այլ  
ևս անով չի զբաղիր:

Արարատը՝ որուն գագաթը կը տնկուի  
ամային մէջ ահագին կոնի մը ձևով, 5000  
մեղրէ աւելի բարձրութենէն կ'իշխէ Ա-  
րաքսի ջուրերուն: Իր ազագուն, արեւա-  
տոյնը, լավաներու հոսուքներէն ակօսա-  
ցած կողերը՝ կը ցածնան գոհավէժ զա-  
ռիվայրներով ծածկուած հրաբխային ռում-  
բերու մնացորդներով և զլորտկուող հա-  
լած մետաղներով: Ոչ մէկ պատուար, ոչ  
մի գօտի փոքր լեռներու որ հսկային ըս-  
տորոտը ծածկէ՝ և քնասէ անոր մեծու-

թեան: Նա կը կանգնի կղզիացած, կար-  
ծեա երկրին խորերէն մէկ թափով դուրս  
ցցուած ըլլար, ամենագոր կամբի մը ճի-  
գով: Անոր քով է փոքրիկ Արարատը որ՝  
հակառակ իր մեծ հասակին՝ այն ազգե-  
ցութիւնը կ'ընէ ինչ որ պիտի ընէր իր  
հօրը քով կանգնած մանկիկ մը՝ ուշադիր  
անոր հրամաններուն: Ուղիղ գծով շա-  
փուած՝ գրեթէ քսան քիլոմեդը հեռու է  
Արարատի գագաթը Արաքսի անկողնէն.  
և կը թուի թէ լեռը իր բոլոր ծանրու-  
թեամբ կը ճգմէ Երեւանի հովիտը. եզա-  
կան տեսարան, եթէ ոչ տիեզերք՝ գէթ  
Հին Աշխարհին մէջ. որովհետեւ Սպիտակ  
լեռը, Գազպէկը, Դրմավէնդը, Եւրեկատը  
և մեր երկիրներուն գրեթէ բոլոր ամե-  
նաբարձր գագաթները՝ թէ և վիթխարի  
ստորոտներու վրայ բարձրացած և կա-  
րեւոր սրածայրերով ըրջապատուած ըլ-  
լան, դիտողին աչքին առջև կը կորսնցնեն  
սակայն իրենց վահութեան մեծ մասը:  
Միայն Էլպարուզն է որ՝ Ռուսիոյ ամայի  
դաշտերէն դիտուելով՝ կը տեսնուի իր  
բոլոր շքեղութեամբ, այնու հանդերձ որ  
ահագին պատուանդանի մը վրայ կը  
հանգչի:

Հայաստանի հարաւակողմը՝ քրդական  
լեռնաշղթային մէջ՝ բազմաթիւ գագաթներ  
կը ցցուին որոնց բարձրութիւնը 4000էն  
5000 մեղրի շուրջ կը դառնայ, բայց բո-  
լոր այս սարերը շատ բարձր լեռներէ  
ըրջապատուած են. որով կ'աներևութա-  
նան անոնք այս հսկայական պարիսպին  
ամբողջութեան մէջ, և նախկին ժողովուրդ-  
ներու ուշադրութիւնն երբեք զրուած չեն  
Ձագրոսը՝ որ Պաղտատի վրայ կ'իշխէ և  
Զեւդ է Քուհը՝ որուն ձիւները բովան-  
դակ Սուսիանիայէն կը տեսնուին, բնաւ  
խաղացած չեն երևակայութեանց մէջ այն  
դերը որ իրենց վերապահուած էր: Միայն՝  
հին քաղաքակրթութեան երկիրներուն մէջ՝  
«ոգիներու լեռ» Դրմավենդն է որ կրնայ  
Արարատի հետ բաղդատուիլ, ճանապարհ-  
հորդին վրայ գործած տպաւորութեան տե-  
սակէտով: Բայց որչափ որ այս սարը  
գրեթէ հազար մեդր աւելի բարձր է Հայաս-

տանի հրաբուխին բարձրութենէն, իր տես-  
քը շատ նուազ կերպով կ'ազդէ մաքի-  
վրայ, որովհետեւ նա կը կանգնի Էլպուր-  
գի մէջ տեղ, որ Ալպեանց լեռնաշղթա-  
ներէն աւելի բարձր է: Նոյն ինքն Ա-  
րարատը հարաւէն դիտուելով՝ խոյնէ և  
կամ Բայազետէն, չի տար մեծութեան  
այն գաղափարը զոր կը զգայ մարդ երբ  
դիտէ զայն Երևանէն և կամ Վաղարշա-  
պատէն:

Արարատը Մեծն Հայաստանի կեդրո-  
նը կը բարձրանայ, արեւելէն կը տիրէ  
Ուրմիոյ լճին երկրին, հիներու Ատրպա-  
կան ըսածին, հարաւէն՝ Վանի լճակին,  
Ուրարտուի երկիրներուն, արեւմուտքէն և  
հարաւ արեւմուտքէն Տիգրիսի, Եփրատի  
և Արաքսի աղբերակներու երկիրներուն,  
գետեր՝ որոնց անունները կապուած են  
մարդկութեան օրրան եղող անուններուն:  
Մասիսը կ'իջիւն այս հռչակաւոր տեղե-  
րուն, ինչպէս որ Գազպէկը կը տիրէ կով-  
կասեան մեծ պարսպին երկու կողմերուն,  
ինչպէս որ Գրմավենդը կը տարածէ իր  
աչքը կասպից ծովուն և իրանեանց իշ-  
խանութեան վրայ, ինչպէս որ Հիմալայոյ  
մեծ գագաթները իբրեւ արքաներ կը կանգ-  
նին թիպէղի ստառն դաշտագետիններուն  
և Հնդկաստանի ուռնազարդ դաշտերուն  
մէջտեղ:

Բոլոր երկիրներուն մէջ՝ հսկայ լեռնե-  
րու երևոյթը՝ ժողովուրդներու հոգւոյն մէջ  
միշտ արթնացած է խորհրդապաշտ ըզ-  
գացումներ, և ինչպէս որ Ֆուզի-Սմա-  
սրազանն է Ճարոններուն, և Ուլիմպոս  
լեռը հելլէն աստուածութեան բնակարանն  
եղած է, Արարատն ալ յարգանքի ա-  
ռարկայ մ'է թէ՛ Բրիտանոնէից և թէ՛ Մահ-  
մետականներուն համար: Անշուշտ այս  
հրաբուխը աստուած մ'եղաւ այն ժողո-  
վուրդներուն որ իր հովանւոյն տակ պատըս-  
պարուած կ'ապրէին, հայազն Հայկի այս  
տեղերու գալէն առաջ:

Ինչպէս որ միշտ իր պատահի այն ժո-  
ղովուրդներու ժառանգութեան համար՝ որ  
երկար դարերէ ի վեր զրկուած են իրենց  
քաղաքական անկախութենէն, Հայաստանն

այսօր ճշգրիտ սահմանազուխներ չունի,  
ըլլայ Ռուսիոյ իշխանութեան տակ գտ-  
նուող իր գաւառներուն, ինչպէս նաև պար-  
սիկ կամ Թուրք երկրին մէջ: Տփղիս՝  
վրաստանի Թագաւորներու հին մայրա-  
քաղաքը, մեր օրերուն՝ կը բովանդակէ  
բազմաթիւ հայ ընտանիքներ, ինչպէս նաև  
Բագու, Բաթում, Տրապիզոն, Եւպոն...  
Հին ժամանակ, ինչպէս նաև Միջին Դա-  
րուն մէջ, հայ անկախութեան զանազան  
շրջաններուն՝ մեծ և փոքր Հայաստանի  
սահմանազուխները աւելի փոփոխական  
եղան, սակայն՝ անդրկովկասեան երկիր-  
ներուն համար պէտք է նկատել Կուր գե-  
տին հարաւակողմն եղող լեռները իբր Հայոց  
տիրապետութեան մաս կազմող և Կիւրո-  
սի (Կուրի) հովտին ընծայել իր վրացի  
ազգայնութիւնը:

Քանի մը տարի միայն անցեր է այն  
ժամանակէն երբ ճանապարհորդը՝ Տփղի-  
սէն Երևան երթալով, կ'անցնէր Փոքր-  
կովկասի լեռներուն ամենաբարձր և ա-  
մենէն աւելի նկարչական կողմէն՝ Վրաս-  
տանի մայրաքաղաքը թողլէն վերջ՝ նախ  
կը հետևէր Կուրի ընթացքին՝ անոր աջ-  
և կողմանէ եգերքէն վար իջնելով: Ետոյ Ա-  
ղստաֆա-Ջայի գետախառնունքին թող-  
լով վրացի գետը, այս գետահովտէն վեր  
կը բարձրանար մինչև Դիլիշան գիւղը,  
այսպէսով Հայաստանի հիսիսային շրջա-  
նակներուն մէջ մտնալով: Հոն, այս վեր-  
ջին գիւղին մօտ եղած կրճին ցով կը թո-  
ղուր Կուրի աւազանը՝ Արաքսի աւազանին  
մէջ մտնալու համար, և անդրկովկասեան  
մեծ լճին եգերքէն ճերելով՝ կը հասնէր  
Ելենովքա ռուսական փոքրիկ գիւղը՝ ուր  
կը սկսի գէպի Երևան էջը՝ Զանկուշայի  
հովտէն, գետակ մը որ Արաքսի մէջ կը  
թափէ լճին առջեւալ ջուրը:

Այս ճամբորդութիւնը Աղստաֆայէն  
մինչև Երևան՝ ժամանակաւ կառցով կ'ըլ-  
լար, կը կատարուէր ամենէն աւելի չք նա-  
ճանապարհորդութեանց մէկուն պէս՝ ո-  
կարելի ըլլայ Փոքր-կովկասի այնքա՛ն  
նկարչական լեռներուն մէջ ընել, ճամբան  
այսօր շատ թողլըուած՝ կ'օժապտտի վայ-

բնին բնութեան մը մէջ, որուն տեսարանն երբ յար կը փոփոխուին: Երբեմն կը մագլցէ անտառներով հովանաւորուած գառնիկներէ, երբեմն կը սահի մերկ ժայռերու մէջ, կը պատատուի երկաթաքարեայ խարակներու ոտքերուն շուրջ, երբեմն բնութեան լավաներու ձայներուն, ուռուցիկ հալած մետաղներու կամ սև քայց կարմրեակ որսիգաքարերու կոյտերու վրայ, և հրաբուխի ապակին կը շողշողայ արևուն ճառագայթներուն տակ: Ուրիշ տեղեր ան կը խորատուգուի խորին լըջադէմ, կիրճերու մէջ, զուարթացած միայն անհամար ջրվէժներու հոսքող ջուրերէն,

և հոս ու հոն, լեռան կողին կպցուած արծիւի բոյնի մը պէս՝ կ'երևի գիւղակ մը կռե տուներով, ծեծուած հողէ հարթ տանիքներով, ուր հիւրասէր մշակներ կը բնակին, մեծ մասամբ Հայեր: Այս ճամբայէն, կամ, այս «խճուղի»-էն զատ՝ ինչպէս որ կը կոչեն զայն Ռուսիոյ մէջ, գիւղերու մէջ եղած հաղորդակցութիւնները միայն ջորիներու նեղ արահետներէն կ'ըլլան, ինչպէս որ Միլին Դարու և ամենաինքն ժամանակի ջրջաններուն:

Ժ. ՏԷ ՄՈՌԱՆ

Թրգմ. Միհրան Շէխիկեան

## == Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն ==

### ՀԱՅՏԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅՏԵՐԻՈՅՆ ՄԷՋ

(Տգ. Վաղարշապատ, 1898)

(Շար. տիս 1919 թգմ. էջ 45)

Արախոսիկ «գեղեցկաձայն»։ Զմեծ երաժիշտն ձայնաւորաց՝ որ մականունն ասի արախոսիկ (էջ 216)։

Ակողոս «ուղեկից, հետևորդ, ծառայ»։ Եւ լուեալ զայս թագաւորն Միխայլ... առաքեաց ի Սերաստիա զակողութիւն իւր հնգետասան հազարօք՝ բերեալ զնոսա առ իւր, զի մի՛ փախիցեն. և հասանէր ակողութիւն զօրօքն ի Սերաստիա... և տեսեալ ակողութիւն զմաստութիւնն, (էջ 83), = յն. ἀκόλουθοις նոյն նշ։

Անափոստ «բիւզանդական պաշտօնեայ մ'է»։ Եւ յանափոստն պոստոսպիւրին Դերմնայ, Լեւոնի և Տարօնոյ. զօրավարին ողջոյն և ի տէր խնդալ (էջ 27)։ = Անշուշտ յունարէն է, քայց չկայ Bailly-ի մեծ բառարանին մէջ։

Աբրահ «անգործ»։ Ի հովանի ծառոց և ի պատից նստեալ զգեղեթին անբան և անգործ (էջ 413)։

Անհատակոտոր «որ կցկոտուր չէ»։ Անհատակոտոր, անսպթաքելի և յարմարական միշտ բարբառ է (էջ 382)։

Ատիլ «ձանրութեան չափ մ'է»։ Առաքեաց ի Բաղէշ և ետ բերել զբարանն, զոր վասիլ թագաւորն արարեալ էր յաղագս Հերայ, հնգետասան ասիլի (տպ. երուսաղէմի՝ օդի), ահաւոր և զարմանալի (էջ 120)։ = Արաբ. أدیل 'adil բառն է, որ թէ և սովորաբար կը նշանակէ «արդար», քայց փոխաբերաբար ստացած էր «կշիռ» նշանակութիւնը, մանաւանդ Պարսից մէջ. հմմտ. Գէորգ Դպրի պարսկերէն բառարանը (էջ 31 թ)։

Աւարաւեք «աւարել՝ կողոպտել սիրող»։ Մի ոք ի պարսաւաղէտ ատուղաց նորա և յաւարասէր մախողացն սողտանիցէ զմեզ բամբասելով (էջ 392)։ — Ածականք տեղին քիչ մը անյարմար է։

Բիթ «մեղեխ, կռանի հաստ կոթ»։ Առեալ ի ձեռին իւրում բիր մի կռանի, և